11317

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 08 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0113-22

Ձեռնարկողը՝ **Գևորգ Գևորգյան**
ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր, Հանրապետության 2-րդ նրբ. 37 փ.

Գործունեությունը՝ ***Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր, Երևանյան 44 հասցե

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 11 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0113-22
<05> 08 2022թ.

Քաղաքացի Գևորգ Գևորգյանի կողմից ներկայացված, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Գևորգ Գևորգյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր, Երևանյան 44 հասցե

Ներածական մաս. Քաղաքացի Գևորգ Գևորգյանը /այսուհետ՝ Ձեռնարկող/ նախատեսում է Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում կառուցել առևտրի կենտրոն:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 20102020-04-0035, /ծածկագիրը՝ 04-001-0050-0011/, Արմավիրի համայնքապետարանի կողմից 08.09.2021թ. տրված N 73 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/, «Երկրաբան-Ուտիք» ՍՊ ընկերության ինժեներաերկրաբանական հիմնավորումը, «Սեյսմաանվտանգություն» ՍՊ ընկերության փորձաքննության եզրակացությունը /Փ14-22/:

Հողամասերի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր բաժնային սեփականություն: Նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0.37 հա:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել առևտրի կենտրոն, որը ծառայելու է որպես մանրածախ առևտուր իրականացնելու համար՝ սնունդ, տնտեսական ապրանքներ, հագուստ և այլն: Նախատեսվող առևտրի կենտրոնի գործունեության տարածքը վաղ ժամանակներից գտնվում է մարդածին ազդեցությունների գոտում, փողոցի կողմից զբաղեցված է նախկին «Դոսաֆի» 4 հարկանի կիսաքանդ կառույցով, մյուս կողմից՝ ավտոտնակների պարիսպով: Բաղրամյան փողոցի կողմից առկա են ավտոտեխսպասարկման կետեր: Տարածքը Երևանյան փողոցից գտնվում է 7.7մ հեռավորության վրա, և այդ մասում շինարարության ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում, դեկորատիվ սալիկապատում և կանաչապատում:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ գործունեության տարածքում առկա են շինություններ /վարչական շենք՝ 1788.6մ²,

ավտոտեխսպասարկման կայան՝ 26.9մ², և ծածկ՝ 36.4մ²/, որոնք նախքան շինարարական աշխատանքները սկսելը ապամոնտաժվելու են:

Նախատեսվող առևտրի կենտրոնի հեռավորությունը մոտակա շենք-շինություններից կազմում է 6-10մ, ինչը պատկերված է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտում /այսուհետ՝ Հայտ/ ներկայացված տարածքի իրադրության հատակագիծ սխեմայում:

Նախատեսվող առևտրի կենտրոնը իրենից ներկայացնում է ընդհանուր տանիքածածկով, երկու վերգետնյա հարկով շինություն՝ 2037.96մ² /40.8x49.95մ/ կառուցապատման մակերեսով: Մնացած 1662.04մ² մակերեսով տարածքը բարեկարգվում և կանաչապատվում է:

Շենքի դիմային հատվածը 1 հարկ է՝ 6մ, իսկ հետնամասով 2 հարկ՝ 3 մ բարձրությամբ: Շինությունը բաղկացած է սրահից, աշխատասենյակներից, պահեստային մասերից, սանհանգույցներից, միջանցքներից, ենթակայանից և կաթսայատնից: Շենքի ուղղահայաց ջրամեկուսացումը կատարվելու է երկու շերտ ձյութով, հորիզոնական ջրամեկուսացումը՝ 1:2 հարաբերությամբ ցեմենտավազային շաղախով՝ 30մմ հաստությամբ: Ճակատները բոլոր կողմերից երեսպատվում է տրավերտինի սալիկներով: Տանիքի ջրահեռացումը լինելու է արտաքին և հարթ:

Շրջանի և տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ստորին-վերին չորրորդական տուֆերը, բազալտները և լճա-ալյուվիալ նստվածքները, որոնք հիմնականում ծածկված են ժամանակակից կավային, ավազային, խոշորաբեկորային և տեխնածին գրունտներով: Հիդրոերկրաբանական տեսակետից տվյալ տեղամասերում տարածված են շերտային տիպի ջրերը, կապված ալյուվիալ առաջացումների հետ և խորքային միջլավային ջրերը:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ Amax=0,33g հատկությունների երկրորդ կարգի են: Գրունտի սառչելու առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-ին 7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0.7 մետր: Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքը տեղակայված է Արարատյան միջլեռնային հովիտի Հյուսիս արևմտյան մասում: Համաձայն «Երկրաբան-Ուտիք» ՍՊ ընկերության ինժեներաերկրաբանական ուսումնասիրության՝ տեղամասը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են 860.6-862.9 մետրի սահմաններում:

Համաձայն կատարված հետազոտությունների հաշվետվության՝ հետազննվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքին բնորոշ են հետևյալ շերտերը՝ վերից-վար.

Շերտ-1 Լիցք չպառակտված, ճալաքարա-կավավազային կազմի, բուսական արմատներով, մասամբ մալուխի մնացորդներով և քայքայված մետաղյա խողովակներով: Շերտը մասամբ ծածկված է քայքայված ասֆալտով, 5-6սմ հաստության: Շերտն ունի համատարած բնույթ՝ 1.5-1.6 մետր հզորությամբ:

Շերտ-2 Տեխնոգեն առաջացումներ. կավավազ դարչնագույն, պնդից-կիսապինդ թանձրության, մինչև 5% կոպիճով և ճալաքարով: Շերտն ունի համատարած բնույթ՝ 3.9 մետր բացված հզորությամբ: Տվյալ տարածքներում համաձայն ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանց հզորությունն անցնում է 10-15 մետրից՝ տեղադրված խոշորաբեկորային գրունտների վրա: Ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ առաջացումներ ստորգետնյա ջրերի տեղամասում՝ մինչև 5.4 մետր խորության հետախուզահորով չեն բացահայտվել և համաձայն ֆոնդային նյութերի տվյալների դրանք ունեն 10-15 մետրից ավելի խորը տեղադրումներ:

Ուսումնասիրվող տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներա-երկրաբանական հետևյալ երկու տիպերը.

- Շերտ թիվ 1՝ լիցքային,
- Շերտ թիվ 2՝ կավային:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Համաձայն ինժեներա-երկրաբանական հետազոտության եզրակացության՝ լիցքային շերտը ենթակա է հեռացման: Երկրորդ շերտը՝ կավավազներն ունեն պնդից կիսապինդ թանձրություն, կոպիճի մինչև 5% պարունակություն, չունեն վտանգավոր սպիտակահողային նյութերի պարունակություններ և հետևաբար համարվում են բարենպաստ գրունտներ նորակառույցի հիմքերի համար:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սոֆոզիան, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման ընթացքում կատարվելու է հետևյալ շինարարական աշխատանքները.

- քանդման աշխատանքներ,
- շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ,
- մեքենաներով և ձեռքով հողային աշխատանքներ,
- հիմնային աշխատանքներ, գրունտի հետլիցք, տոփանում,
- արտաքին աշխատանքներ՝ կմախքի, պատերի, ծածկերի, տանիքի իրականացում և մեկուսացում,
- ներքին աշխատանքներ՝ միջնորմներ, հատակներ, ենթակառուցվածքներ և այլն,
- ժամանակավոր կոմունիկացիոն և նախապատրաստական աշխատանքներ:

Նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցապատման ժամանակ կատարվելու են 925 մ^3 ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտը, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի հարթեցման և լիցք անելու համար: Իսկ գրունտները, որոնք կպարունակեն խոշոր քարաբեկորներ, շինաղբի հետ կտեղափոխվեն համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Նախատեսվող գործունեության տարածքում բուսահողը բացակայում է, որի պատճառով բուսահողի պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, կազմակերպվեու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Շինարարության փուլում շենքի կառուցապատման համար նախատեսվում է շինարարական հրապարակ, որը կազմում է մոտ 3650 մ^2, որտեղ լինելու են.

- ամբարձիչներ՝ 2 հատ,
- ժամանակավոր աշխատասենյակ՝ 1հատ,
- ճաշարան 1 հատ,
- աղբի տարաներ 2 հատ,
- լուսարձակներ 6 հատ,
- հանդերձարան 1 հատ,
- շարժական սան հանգույց /բիոզուգարան/ լվացարանով՝ 1 հատ,
- շինարարական ավտոտրանսպորտի ելքի լվացման կետեր՝ 2 հատ, շինհրապարակի մուտքի և ելքի մոտ,
- հակահրդեհային վահանակ՝ 1 հատ:

Երևանյան փողոցի կողմից կառույցը՝ շինարարության փուլում, առանձնացվում է ժամանակավոր տեղադրվող վահանակային պատով /70մ/, շենքի 3 կողմից տարածքը առանձնացված է գոյություն ունեցող քարե պարիսպով /175մ/:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1.20X1.50մ չափերի շարժական սանհագույցից /բիոզուգարան/: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման հարթակում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման հարթակի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Շահագործման փուլում առևտրի կենտրոնն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Առևտրի կենտրոնի շենքի կոնստրուկտիվ համակարգը շրջանակային է, սյուները 600x600մմ հատվածքի, բետոնը B 25 դասի, հեծանները 600x500մմ, հիմնային հեծանները 800x900մմ, ծածկերը իրականացնում են երկաթբետոնից h=220մմ: Շենքի արտաքին մակերեսը երեսապատվելու է երեսապատման սալիկներով և բնական քարերով (տուֆ, բազալտ, ապակի):

Շինարարության փուլում օգտագործվելու են այլ շինարարական նյութեր՝ երկաթբետոնե կոնստրուկցիաներ, ամրաններ, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, ավազ, երեսապատման բարձրորակ սալիկներ և այլն:

Ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը, ինչպես նաև անհրաժեշտ այլ շինարարական նյութերը բերվելու են համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորվելու են շինարարական հրապարակում: Նախատեսվում է օգտագործել միաձույլ B25 դասի երկաթբետոն:

Բետոնանյութը բերվելու է մասնագիտացված կազմակերպության բետոնախառնիչներով: Բետոնանյութի մատակարարումը կկատարվի այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված /լիցենզավորված/ կազմակերպություններից: Տարածքում շինանյութերը պահեստավորվելու է ժամանակավոր շինություններում՝ տակդիրների վրա: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ժամանակավոր շինությունում՝ ծածկի տակ:

Շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքի ջրցանի, տեխնիկական կարիքների, հողի /գրունտի/ խոնավացման, շինանձնակազմի խմելու-կենցաղային և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների խմելու-կենցաղային նպատակների համար օգտագործվելու է բերովի ջուր՝ պայմանագրային հիմունքներով: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհաշիջման, ջրցանի և անիվների լվացման համար:

Շինանձնակազմի խմելու-կենցաղային ջրածախսը համաձայն կատարված հաշվարկի կազմում է՝ 332.64 մ^3/շին. ժամ. կամ 0.63 մ^3/օր, իսկ տարածքի ջրցանի, հողի /գրունտի/ խոնավացման, անիվների լվացման ջրածախսը համաձայն կատարված հաշվարկի կազմում է՝ 1368.75 մ^3/շին. ժամ. կամ 5.475 մ^3/օր:

Շահագործման փուլում ջրի հաշվարկային ծախսը 14.8 մ^3/օր, 0.6 լ/վրկ: Հակահրդեհային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկված է 5.2 լ/վրկ:

Շինարարության փուլում աշխատողների քանակը առավելագույն ծանրաբեռնվածության հերթափոխում կազմում է 27 մարդ, որից 5-ը՝ ինժիներատեխնիկական, 22-ը՝ բանվոր:

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Նախատեսվող առևտրի կենտրոնի շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ավտոինքնաթափ՝ 4 միավոր,
- բուլդոզեր՝ 1 միավոր,
- էքսկավատոր /0.5մ^3 շերեփով/՝ 1 միավոր,
- ոչ ինքնաթափ՝ 1 միավոր,
- ավտոամբարձիչ /25 տ բեռնատվության/՝ 1 միավոր,
- բետոնոպոմպ՝ 1 միավոր,
- բեռնատար Կամազ՝ 4 միավոր,
- եռակցող և էլեկտրական այլ գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման–բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին, համաձայն ՇՆևԿ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5^0-ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շենքի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են 2 տարի /24 ամիս/:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ներառված են ժամանակացույցում, ինչը ներկայացված է Հայտում:

Նախատեսվող առևտրի կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից 27.08.2021թ. տրված N ՎՋ4857/2021 տեխնիկական պայմանի, ինչպես նաև գործող շինարարական նորմերի և կանոնների:

Համաձայն տեխնիկական պայմանի ջրամիացումն իրականացվելու է Երևանյան փողոցով անցնող d=160մմ պոլիէթիլենային ջրագծից՝ d=50մմ պոլիէթիլենային խողովակով /ջրագծում ջրի ճնշումը՝ P=1.5մթն, ջրամատակարարումը՝ շուրջօրյա/: Ջրաչափական հանգույցի և հակահրդեհային հիդրանտի տեղադրման կետերում կառուցվելու է դիտահոր:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ առևտրի կենտրոնի կոյուղագիծը միացվելու է Բաղրամյան փողոցով անցնող d=400 մմ կոյուղագծի՝ գոյություն ունեցող դիտահորին: Միացվող կոյուղագծի երկարությունը կազմում է 149 մ, որն իրականացվելու է պոլիպրոպիլենե խողովակով:

Տանիքի ջրահեռացման համար նախատեսված է d=100 մմ և d=200 մմ տրամագծով պոլիպրոպիլենե խողովակների օգտագործմամբ արտաքին գծի կառուցում, մինչև գոյություն ունեցող հեղեղատար, ընդհանուր 61մ երկարությամբ:

Առևտրի կենտրոնի էլեկտրամատակարարումը նախատեսված է իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի, ինչպես նաև «Արմավիր» ՇԷՑ-ի կողմից 01.09.2021թ. տրված N ՎԹ 4/245 տեղեկանքի՝ ըստ որի էլեկտրամատակարարումը կիրականացվի 400 կՎԱ հզորության տրանսֆորմատորով Արմավիր քաղաքի ենթակայանի բարձր լարման վահանից:

02543163 ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS S6288

Էլեկտրամատակարարումը նախատեսվում է մեկ ԱԲԲԳ 3x185x1x120մմ² մակնիշի մալուխով մուտքային բաշխիչ վահանով և շենքի ներսում կիրականացվի էլեկտրաէներգիայի բաշխում:

Էլեկտրասարքավորումների նախագիծը մշակված է 380/220վ լարման համար՝ պոլիէթիլենային խողովակներով: Նախատեսվում է վահանակի սենյակ՝ 5.8մ² մակերեսով:

S1 400կՎԱ տրանսֆորմատորային ենթակայան նախատեսվում է տեղադրել 7.7 մ² տարածքում՝ 1-ին հարկում՝ բետոնապատ հատակի վրա: Տրանսֆորմատորի չափսերն են՝ 2.25x1.0x2.16մ:

Շահագործման փուլում առևտրի կենտրոնի էլեկտրամատակարարումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի և քաղաքացի Գևորգ Գևորգյանի միջև կնքված պայմանգրի հիման վրա:

Առևտրի կենտրոնի գազամատակարումը նախատեսված է իրականացնել համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի /Ձեռնարկողը դիմել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համապատասխան մասնաճյուղ գազամատակարարման տեխնիկական պայմանը ստանալու համար/:

Առևտրի կենտրոնի էներգախնայողության և էներգաարդյունավետության նպատակով նախատեսվում է շենքի արտաքին պատերի ջերմամեկուսիչ նյութերով պատում 40մմ հաստության պենոպլեքսով, ինչպես նաև նորմավորված հրակայուն, ջրամեկուսիչ, գոլորշակայուն նյութերով, հերմետիկ փակվող պատուհանների դռների օգտագործում:

Ջեռուցման նախագիծը իրականացված է ձմռանը -21°C, ամռանը՝ +35°C հաշվարկային ջերմաստիճանների համար: Շենքում նախատեսված է ջեռուցման և սառնամատակարարման համակարգեր: Շենքի ջերմամատակարարումը իրականացվելու է տանիքում նախատեսված կաթսայատնից: Կաթսայատանը նախատեսվում է տեղադրել երկու կաթսա, յուրաքանչյուրը Q=150 կՎտ հզորությամբ, որը կապահովի ջուր ջերմատարի T_1=80°C, T_2=65°C պարամետրերը: Ծխագազերը հեռացվելու են D=250մմ, H=7.0մ ծխատարով: Կաթսայատան հաշվարկային ջերմային ծախսը կազմում է Qջժ =250կՎտ:

Սառնամատակարարման համար շենքի տանիքում նախատեսված է մեկ սառեցման ագրեգատ՝ Q=251 կՎտ հզորությամբ, ապահովվելու է ջուր-ջերմատար 7-12°C պարամետրեր: Սառեցման հաշվարկային ծախսը կազմում է Q_U=252.0x1.1=276 կՎտ:

Առևտրի սրահում նախատեսված է օդի ներածման և արտածման մեխանիկական համակարգեր, որոնց նախագիծը կատարված է գործող շինարարական նորմերին և կանոններին համապատասխան: Օդի հեռացումը համակարգից իրականացվելու է ամենաբարձր կետում տեղադրված ավտոմատ օդահեռացման փականներով: Առևտրի սրահում օդի ներածումը իրականացվում է ՆՀ-1 ներածման համակարգով, կենտրոնախույս կոնդիցիոների, իսկ օդի արտածումը՝ ԱՀ-1 արտածման համակարգով: ՆՀ 1 համակարգը համալրված է ռեկուպերատորով:

Աշխատասենյակներում օդի ներածումը իրականացվում է ՆՀ-2 համակարգով, կանալային կոնդիցիոների, իսկ օդի արտածումը՝ ԱՀ-2 համակարգով, կանալային օդամղիչի միջոցով: Պահեստների օդի ներածումը իրականացվում է ՆՀ-3 համակարգով, ներածման սարքի, իսկ օդի արտածումը՝ ԱՀ-3 համակարգով, կանալային օդամղիչի միջոցով: Սանհանգույցներից օդի արտածումը իրականացվում է առանցքային օդամղիչներով: Աշխատասենյակներում տեղադրված է հատակային օդամղիչ կոնվեկտորներ /ֆանկոյլներ/, առևտրի սրահում կասետային օդամղիչ կոնվեկտորներ: Օդի հեռացումը համակարգից իրականացվելու է ամենաբարձր կետում տեղադրված ավտոմատ օդահեռացման փականներով: Օդափոխությունը իրականացվում է մանրամասն արված նախագծային փաստաթղթերի հիման վրա, ժամանակակից անաղմուկ սարքավորումներով:

Համաձայն նորմատիվային փաստաթղթերի և հաշվի առնելով պաշտպանվող շենքերի շինարարական, կլիմայական և տեխոլոգիական առանձնահատկությունները, այս նախագծի շրջանակներում նախատեսվել է ինքնաշխատ /ավտոմատ/ հակահրդեհային ազդանշանային համակարգ: Հակահրդեհային ազդանշանային համակարգը հաշվարկված է շուրջօրյա և

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՓՈՐՁԱՔՆՆԻՉ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТНОЙ
COMMISSION
OF EXPERTS
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

անընդմեջ աշխատելու համար, ինչի օգնությամբ ժամանակին կհայտնաբերվի հրդեհի օջախը և կտեղեկացվի անվտանգության ծառայություն և ԱԻՆ ծառայության հեռակառավարման վահանակին: Հակահրդեհային ազդանշանային սարքավորումները տեղադրվելու են բոլոր սենյակներում, բացառելով սանհանգույցները:

Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ՝ առկա շինությունների քանդման արդյունքում և շինարարության ընթացքում՝ 9713.5մ³ քանակով /IV դաս, ծածկագիր՝ 9120060101004/: Շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և տեղափոխվելու է համայնքապետարանի կողմից հատկացված 5կմ հեռավորության վրա գտնվող քաղաքային աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով /Հայտում կցված է Արմավիրի համայնքապետարանի կողմից 11.04.2022թ. տրված N 104 տեղեկանքը/:

Շինարարության ընթացքում կառաջանա 5400 կգ/տարի /ընդհամենը 2 տարվա ընթացքում՝ 10800կգ/, իսկ շահագործման փուլում՝ 9000կգ/տարի կենցաղային աղբ /IV դաս, ծածկագիր՝ 9120040001004/:

Շինարարության փուլում տեղադրվելու են 2 հատ 1.5X1.0 մ³, շահագործման փուլում՝ 4 հատ 1.5X1.0 մ³ տարողության աղբարկղեր:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում հնարավոր են տրանսֆորմատորային յուղերի արտահոսք՝ հնարավոր վթարների դեպքում, որի վերականգնման աշխատանքները կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Տրանսֆորմատորի տեղադրման վայրի հատակը բետոնապատ է՝ հնարավոր յուղային հոսքը հողային, ջրային ռեսուրսներ կանխելու համար: Անհրաժեշտության դեպքում ենթակայանի վերանորոգումը կատարվելու է «ՀԷՑ» ՓԲԸ-ի մասնագետների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու է համապատասխան տարրաների մեջ և հանձնվելու է մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով: Հնարավոր արտահոսքերի դեպքում կիրառվելու են spill kit կոչված ներծծիչ կտորները, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը: Աղտոտված լաթերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Բարեկարգման աշխատանքները ներառում են ավազակոպճային աշխատանքներ, բազալտե եզրաքարերի, բետոնե դեկորատիվ սալիկների տեղադրում և բետոնապատում: Ազատ տարածքներում՝ տեղ-տեղ, ինչպես նաև գոյություն ունեցող ավտոկայանատեղիի եզրագծով, մոտ 12մ² մակերեսով տարածքի վրա նախատեսվում է իրականացնել կանաչապատում սիզախոտով՝ համատեղված ծաղիկներով և վարդերով, նախատեսվում է նաև վերգետնյա ավտոկայանատեղիների իրականացում:

Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում /ազդեցության գոտում/ լանշաֆտի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է գործունեության տարածքից 30մ հեռավորության վրա գտնվող համայնքային նշանակության գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է Φ89 վերգետնյա պլաստիկե խողովակներով ցնցուղային եղանակով: Ոռոգման կպատակով ջրապահանջը համաձայն կատարված հաշվարկի կկազմի 1680 մ³/տարի:

Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ-ում գործող օրենսդրության հիման վրա՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո:

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է խիտ կառուցապատման գոտում: Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, տարածքը կառուցապատված է, բուսականությունը բացակայում է: Մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում հնարավոր չէ կենդանատեսակների, բնադրավայրերի, միգրացիոն ուղիների, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդատեսակներ առկայությունը տարածքում:

Նախատեսվող գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային հուշարձանները և բնության հուշարձանները:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին,
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինաղբ, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,
- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,
- սորուն նյութերի պահեստները կծածկվի համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելի փոշու տարածումը,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվի տարածքը և առաջացած թափոնները կտեղափոխվի Արմավիրի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- բարեկարգումը և կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Արմավիրի համայնքապետարանի համաձայնեցմանը,
- նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Արմավիրի համայնքապետարանի հետ,

- կանաչապատ տարածքների համար անհրաժեշտ ոռոգման ջուրը մատակարարվելու է գործունեության տարածքից 30մ հեռավորության վրա գտնվող համայնքային նշանակության գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով:,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կկազմակերպվի ցերեկային ժամերին,
- օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենաները ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով, պահպանվելու են աղմուկի և թրթռումների թույլատրելի նորմերը,
- պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերումներ,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման հարթակում: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը,
- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ:

Նախատեսվող առևտրի կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /օդի, հողի աղտոտվածություն, աղմուկ, թրթռում, բուսականության աճի, խնամքի, շինհրապարակի որակի, բանվորական հագուստի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված և այլն/, ինչը ներառված է Հայտի բնապահպանական մեղմացնող միջոցառումների մշտադիտարկման /մոնիթորինգի/ պլան» ենթաբաժնում:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկման համար նախատեսված ծախսերը կազմում է տարեկան մոտ 100 հազ. ՀՀ դրամ, ինչը ներառված կլինի շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվի շինարարական կազմակերպության կողմից:

Նախատեսվող գործունեության իրականացման համար ներդրումային գումարը կազմելու է 1.0մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ /ԲԱՄ/, որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը: Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արմավիրի մարզի Արմավիրի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Արմավիրի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման

արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Առևտրի կենտրոնի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն՝ Արմավիրի համայնքապետարանի կողմից հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Գործունեության տարածքում քանդման ենթակա առկա շինությունների /վարչական շենք՝ 1788.6մ^2, ավտոտեխսպասարկման կայան՝ 26.9մ^2, և ծածկ՝ 36.4մ^2/ նախքան քանդման և ապամոնտաժման աշխատանքները սկսելը անհրաժեշտ է Արմավիրի համայնքապետարանից ձեռք բերել համապատասխան քանդման թույլտվությունը:
6. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
7. Նախագծի վերջնական տարբերակում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
8. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Գևորգ Գևորգյանի կողմից ներկայացված, Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Երևանյան 44 հասցեում նախատեսվող առևտրի կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վրեժ Վարդանյան